

նան ու կը մեծնան , անկէ ետքը վրա-
նին հոգ պէտք չէ ընել : Ի՞նիստիլ ամէն
բան կ'ուտեն , աղտոտ ձձիներ , ձկներ ,
պտուղ , ընդեղէն , արմտիք ու ինչ և իցէ
ուրիշ բան , միայն թէ քիչ մը խոնաւ
ըլլայ . և թէ որ ուտելու չոր բան մը
գտնեն՝ ջրի մէջ կը նետեն , կ'ըսեն , որ-
պէս զի կակըդնայ : Ը ատակեր ալ էն ,
և թէ որ զիրենք գետակի մը մէջ թո-
ղուս՝ ուր որ շատ ձկներ գտնուին , քիչ
ատենուան մէջ բոլոր մանր ձկները
կ'ուտեն :

Ի՞ազը որովհետեւ ասդիէն անդիէն
փետուրներ կը ժողվէ , ու շատ անգամ
ալ նաև իրեն վրայի փետուրները կը
փետտէ , ումանք կարծեր են թէ բազը
փետուր ալ կ'ուտէ . որ բոլորովին սխալ
է . իսկ փետուր ժողվելուն հաւանա-
կան պատճառը աս է որ էգ բաղը եր-
բոր թիսի կը նատի , արուն իրեն կե-
րակուր չբերէր , ուստի կը հարկադրի
որ օրը գէթ անգամ մը որսի երթայ .
նոյն միջոցին որպէս զի հաւկիթները
չպաղին՝ զանոնք փետուրներով կը գո-
ցէ , ու թէ որ բաւական փետուր ժող-
ված չըլլայ՝ իրեն կուրծքիններն ալ
կը փետտէ : Ի՞ս բանիս համար ալ է որ
երբոր հաւկիթ ածելու ժամանակը կը
համար , բաղերը փետուր ժողվելու հա-
մար հաւերուն վրայ կ'իյնան ու անոնց
փետուրները փետելու կը ջանան :

Ի՞ադին միսը ախորժահամ ու մնըն-
դարար ալ է : Ի՞զը մութ կարմիր է ու
վրան սև բծեր ունի : Ը ատ անգամ
մէկ բունին մէջ երկու էգ թիսի կը նրա-
տին ու իրարու հետ սիրով կը կենան :

ԱՍՏԵՂԱԲԱԾԽՈՒԹԻՒՆ

ԼՐԿԱԿԻՆ ՎՐԱՅ ԿՈՐ ԱՐՔԱՆԵաիէ ՏԸ ԳԹԻՌԱՒԼԱ:

Ի՞ւ ՉՈՒԱՆ աս օրերս ԼՐԿԱԿ ըսուած
ՄՈՂՐԱԿԻՆ վրայ բաց ՚ի իրեն հրաշալի
մանեակէն , եօթը հատ ալ արբանեակ

կամ լուսին գիտէինք : Այսոնցմէ առջինը
գտաւ Հիւյկէնս 1655ին . բայց կար-
ծելով թէ առաջին կարգի մողրակնե-
րը մէկէն աւելի արբանեակ չեն ունե-
նար՝ ետևէ չեղաւ ուրիշ ալ գտնելու .
բայց ետքէն 1671ին , 1672ին և 1674ին
ուրիշ չորս հատ ալ երևելին Դամինի-
կոս Քասսինի աստեղաբաշխը գտաւ :
Ի՞նկէց հարիւր տարիի չափ միջոց՝ քանի
որ Հերշէլիր հսկայաձե 39 ոտնաշափ
գիտակը դեռ երկինք չէր ուղղած , կը
կարծուէր թէ Լրկակը ուրիշ արբա-
նեակ չունի . բայց ինքը 1789ին ուրիշ
մէկ վեցերորդ մըն ալ տեսաւ , մէկ երկու
շաբաթ վերջը , սեպտեմբերի 17ին ու-
րիշ եօթներորդ մըն ալ : Ի՞ն ատենէն ին
չուան հիմայ , որ գրեթէ յիսունուինը՝
վաթսուն տարի է , աս մողրակիս բաց
՚ի իրեն մանեակին վրայ եղած նոր դի-
տողութիւններէն ուրիշ երևելի տեղե-
կութիւն մը չունէինք . բայց մօտերս
Լիվրիուլի էսէլ աստեղաբաշխը՝ գալ
զիացի | ըվեռիէ աստեղաբաշխին կը
ծանուցանէ թէ աս սեպտեմբերի 18ին
գիշերը Լրկակին վրայ ուրիշ մէկ ու-
թերորդ արբանեակ մըն ալ տեսեր է :

Ո՞ենք հոս աս ալ աւելցընենք , որով
աս երևելի աստեղաբաշխին արդիւնքը
կերպով մըն ալ կ'աւելնայ , թէ ինքը իր
ձեռքովը ոչ միայն իր գիտակին սապնա-
ձևերը շիներ է , հապա նաև դիտակին
յենսարանը , որուն վրայ որ հանգչած է ,
և բովանդակ մէկալ կազմուածքը իւր
սարօքը , որուն վրայ որ կը շարժի գի-
տակը :

—————

ՀԱՆԵԼՈՒԿԱ

ԵՐԿԱՆԻՑ հանգոյն յար ընթանամ
Երկրի նըման ես անշարժ կամ ։
Ի համբուրից մերձ որոտամ
Անձրէ հեղում մաննանիըման :

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ հանելուկան եր ԱՐԵՒ-

1 Բատ կարծեաց հնոց :